

ՄԱՐԶԻ ԹԹՈՒՋՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԳՈՐԾՈՒՆԵՌԻԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 77¹, 77², և 77³ հոդվածների և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետի դրույթներով

որոշում եմ՝

1. Առաջարկել մարզի Թթուջուր համայնքի ղեկավարին՝
 - 1) իրավական ակտերի փոփոխությունները կամ լրացումներն իրականացնել ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի դրույթներով.
 - 2) իրավական ակտերն իրենց կառուցվածքով, իրավական տեխնիկայի կանոններով համապատասխանեցնել «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 40 և 41-րդ հոդվածների պահանջներին.
 - 3) իրավական ակտերի նախաբանում կամ բովանդակության մեջ նշել որ նորմատիվ իրավական ակտի, դրա մասի, համաձայն կամ ի կատարումն է ընդունվում տվյալ իրավական ակտը.
 - 4) իրավական ակտերն ուժը կորցրած ճանաչել ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին կետով.
 - 5) նորմատիվ իրավական ակտերը պետական իրավական փորձաքննության և պետական գրանցման ներկայացնել «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի պահանջներին համապատասխան.
 - 6) հաստատել և գործողության մեջ դնել առևտրի, հասարակական սննդի և սպասարկման ոլորտի համայնքային կանոնները, ինչպես նաև ավագանու և համայնքի ղեկավարի կողմից քաղաքացիների ընդունելության կարգը.
 - 7) ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածով ուժը կորցրած ճանաչել համայնքի ղեկավարի 2008թ. հուլիսի 11-ի N 42 և 2009թ. ապրիլի 20-ի N 88-Ա որոշումները.
 - 8) համայնքային ծառայողների անձնական գործերի վարումն իրականացնել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի 2006թ. նոյեմբերի 7-ի «Համայնքային ծառայողների անձնական գործերը վարելու մասին» N 20-Ն հրամանով հաստատված կարգի պահանջներին համապատասխան.
 - 9) հաստատել և գործողության մեջ դնել համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների աշխատակարգերը նոր խմբագրությամբ՝ նկատի ունենալով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում կատարված փոփոխությունները.
 - 10) հաշվապահական հաշվառումն իրականացնել «Հաշվապահական հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխան.

- 11) համայնքի սեփականության հողատեսքերը վարձակալության տրամադրել Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 76-80-րդ հոդվածների պահանջներով.
- 12) սույն որոշմամբ ներկայացված առաջարկությունները քննարկել համայնքի ավագանու նիստում և ձեռնարկված միջոցների ու կատարված աշխատանքների մասին գրավոր տեղեկացնել մարզպետին մինչև ս/թ հոկտեմբերի 20-ը:
2. Որոշման կատարման հսկողությունը վերապահել մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչությանը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝

Ն. ՊՈՂՈՍՅԱՆ